

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար 12 ֆր.
սարեկան 7
Վեցամսեայ 7
Արսասահմանի համար սարեկան 15 ֆր.
Վեցամսեայ 8
Ավերակայի համար սարեկան 3 ֆր.
Վեցամսեայ 1.50

Ծանուցումն տղր ու նաչին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեսին աւելի սեղաններու համար 20 0/0 զեղը կը լինայ:

Վառնայի համար ձեռք 40 սանթիմ է

ՇԱՐՋՈՒՄ

ՄԱՍՈՒՆԱԿԱՆ ԱՐԱՐՔԻՆ. ԲԱՆԱԲԱՍԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏՎՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

մակն էր հրամարտը խմբագրութեան Բարձրիկն

Редакция на вѣстанкъ "Шаржумъ," Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռք 15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար ձեռք 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնքն էր չեղ տրուի

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԵԻԿ ՎՃԱՐԷ

Café Promenade Vienne

Այս շքեղ սրահարանը կը գըտնուի Վիեննայի Թրանց Ժօսէֆ քարափին վրայ. կը ստանայ զանազան հայերէն թերթեր. Առհասարակ բոլոր հայ կամ արեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն. Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին գիմել հոս ուր պիտի գտնեն իրենց յարմար գիւրութիւնները և անհրաժեշտ տեղեկութիւնները:

ԳՐԱԳԻՐՆԵՐԸ

«Շարժումը» իր շորքերը քարթի օրուան խմբագրականով պատկերացուցած էր, ընդհանուր գծերու մէջ, գրագիրներու ներքինն ու արտաքինը. եսը, ըմբռնումներն ու ինքնախաբուծիւնը. Ես ինքս, իբր գրագիր, անձնապէս հետաքրքրուած եմ իմ պաշտօնակիցներէս շատերուն վիճակով, և շատ տխուր գտած եմ զայն. Առհասարակ գրագիր մը օրը օրին ապրող մէկն է, կուրացած իր շուրջը անցած գարձածին. Անոր ձգտումները կը պարփակուին միայն ու միայն արտաքին ցուցանուած մէջ. Վարձուած ստրուկի այս կեանքին, չուզեր իսկ մտածել վաղուան իր վրայ. սակայն այդ վաղուանը իր էութեան տագնապներն ու արհաւիրքն են. Եթէ, երբեմն, առանձին մնացած ատեն, կամ վտարիկ գծախտութեան մը պահուն՝ անցողակի միտքը իյնայ իր սոսկալի ապագան, ինքզինքը կը միտքարէ ըսելով. «Ե՛հ, դեռ ժամանակ, երիտասարդութիւն ունիմ», ու կը վտարէ գանկին խորշերէն այդ տխուր խոհորդ, վաղուանը՝ վաղուան ձգելով. Բայց այդ վաղուան օրը արդէն շատ ուշ է, Վաղը՝ աւելի ու եռանդգ սպառած, մաշած ու

կրած՝ գատապարտուած ես կորսուելու. վաղը՝ թշուառութիւնդ է արդէն, վաղը՝ սեւ օրերդ, անձանօթը, անստուգութիւնը, որու գէ՛ղ մաքսուելու ժամանակդ է որ անփութօրէն կը կորսնցնես այսօր. Այո, կեանքի տեղողութեան համեմատութիւնով, ներկան իսկ գրագրի մը համար սուղ է, բայէն նշանակութիւն ունի. Գրագիրը իրեն բնաբան ընելու է իր ընկերական կեանքը յեղաշրջել. գործունէութիւն, ձեռներէցութիւն, քիչ մը անկախ կեանքի սէր, ստրկութենէ խորշանք ու խնայողութիւն ցոյց տալու է իր ապագան ապահովելու ճիգերը ներկով, այն ապագան՝ որ չի գիտեմ թէ ինչն էր կը վերապահէ իրեն. Ասիկա դժուար բան չէ. կամք և քիչ մը նախաձեռնութիւն կը բաւեն. Ի՞նչու ստիպուած ըլլանք արտաքին փայլ մը պահելու համար մեր քիչ շատ կանոնաւոր պիտե՞նք մինչեւ յատակը սպառելու. Ի՞նչու ինքզինքնիս աղտոտ հոտանքին տանք, որ գիտկի պէս մեզի քչէ տանի ուզած տեղը. Խնայողութիւնները ընկերական համախումբ սնտուկի մը մէջ խառնուելով՝ գրագիրներու համար վիճակ մը կը կրնան ապահովել քիչ ժամանակէն. «Կախի՛ր կաթիլ լիճ կը ձեւանայ», կը սէ ժողովրդական առածը, միայն թէ կամք ու կորով ունենանք այս կաթիլներն համախմբելու. Ստեղծենք, մենք, գրագիրներս, «Գրագիրներու ընկերակցութիւն» մը, մեր շարքերը սեղմենք ու մամական որոշ խնայողութիւններ ընելով՝ քանի մը տարուան մէջ մեզի համար հիմնական գրութեան մը պատրաստենք, ու երբ այդ գրութեանը լուրը բաւականաչափ տեսնենք, ձեռնարկենք վաճառականական գործի մը, որ ամենուս կողմէ յարմար պիտի տեսնուի. Իսպառակին առջեւ ժամանակը նշանակութիւնը չունի. արդէն այդ ժամանակին տեղողութեան մէջ

գրագիր մը առանձին բան մը ընելիք չունէր որ կորսնցնելուն զղջայ. Իսկ իր խնայած գրածը ամէն ժամանակ իրեն սեփականութիւնն է, զոր ուզած ատեն կրնայ ձեռք անցնել. Այս կերպով մենք իրարու հետ ալ աւելի սերտ կը կապուինք. մեր շահերը իրարու կը միանան, մեր դիրքն ալ կը բարձրանայ նոյնիսկ մեր շօրապաճիներուն առջեւ, որոնք հիմա կուսան պէս կոչու ու անարժէք առարկայի մը նման շեն վարուիր մեզի հետ այլեւս. Միշտ իրարու ձեռք բռնելով է որ մեզի պէս տկար ու ուրիշէն կախում ունեցող տարբերը իրենց համար փրկութեան ուժ մը ձեռք կը կրնան բերել. Երկու երեք տարուան շրջանի մը մէջ, գրագիրներու համար կարելի պիտի ըլլայ քաղաքի գումար մը գոյացնել ու այն ատեն համախումբ որոշել ու վրձնել սկսուելիք գործին տեսակը, նշանակել այդ գործին յատկացուելիք մեր ընկերը, որ կառավարէ զայն ազատօրէն, ստանալով ինչ որ դուրսը ուրիշի մը քով ծառայելով պիտի ստանար. Այսպէս երբ գրագիրները գուրգուրան, գպուեն ու հոգան իրենց խնայողութիւններու ստեղծագործումը, գործը կրնայ ուղեւորուիլ, մօժանալ ու ծաւալիլ. Գրագիրները ներկային մէջ այդ ձեռնարկէն օգուտ մը սպասելու չեն, քանի որ ունին իրենց կեանքը քաջքնելու միջոցը. ուստի շահերը գրամագրելի վերածուելով, կրնան զըրագիրներու այս ձեռնարկը հըրաշալիքի մը փոխակերպել. Պարոն գրագիրներ, ի՞նչ կարծիք ունիք իմ այս գծած ուրուագրի մասին, իրականալի չէ՞ արդեօք, չի կրնա՞ր ապագային մէջ մեր ընկերական զըրութեան կարեւոր նեցուկ մը ըլլալ(»): ՄԻՆՈՒՆ

(») Այս նիւթին վրայ մեզի զըրուած յօդուածները տիրով կը հրատարակենք. Ծ. Խ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՂԵՆԱԿԱՆ ԱՐԱՐՔԻՆ ԶԵՂԵՆԱԿՆԵՐՈՒՆ ԸՆԴՀ. ԴԱՏԱՎԱՐՈՒՆ ԶԱՌԸ

Նկատելով որ նշան տեղեկ է Թորգոմի այդ աստիճան յեղափոխական նպատակներուն և զգացումներուն, հարցաքննութիւնը առաջ տարուեցաւ: Նշան ըսաւ թէ հինգ-վեց տարի առաջ Բերայի Գրէօքըր օթէլին մէջ աստղագործութիւն ըրած պահուն, ինք հինուց յարաբերութիւն ունէր քովի ինչ հետ և Թորգոմ ալ մասնակցած էր նախկին Դէպքին. ուստի այն ատենէն մնացած ու չգործածուած մեծ ծրար մը հրանիւթ և օճառի ձեւով փշտիկաւոր ու պարագ 12 պոմպաններ Թորգոմի կողմէ իրեն յանձնուած էին և օթէլին մէջ ծառայող Պիթիւցի սպասաւոր Թորյի գիտութեամբ զանոնք պահած է օթէլին նկուղի սանդուխտի տակ. յետոյ Թորգոմի գիւմարի վրայ հրանիւթ պարունակող ծրարը անոր վերադարձուցած է, սակայն պոմպանները տակաւին հոն կը գտնուին: Հաւանական նկատուելով որ Թորգոմ մինչեւ հիմա զանոնք անկէ վերցուցած ըլլայ խնդիրը հարցուեցաւ Նըշանէն, որ պատասխանեց թէ եղեռնական արարքէն երեք ամիս առաջ նոյն պոմպանները անկէ հանելու ձեռնարկուած և նոյն պահուն օթէլը գտնուող վերոյիշեալ Թորյի հետ խորհրդակցութիւն կատարուած է. սակայն նկատելով որ բաւական ժամանակ անցած է և պոմպաններուն տեղը շատ մը շիշեր դրուած են, որով հանելու համար կարգ մը գործողութիւններ պէտք է կատարել և թէ կրնայ ըլլալ որ օթէլին տէրը՝ գերմանահպատակ տիկին Քրէօքըր ալ իմանայ, ետ կեցեր են. հետեւաբար հաստատուած կը յուսայ թէ պոմպանները հիմա հոն կը գտնուին: Ատոր վրայ Քրէօքըր օթէլին մէջ ըստ օրինի խոզարկութիւն կատարուելով այդ պոմպանները անկէ հանուեցան և ինչպէս օթէլին զրկուեցան, Հասկցուելով որ վերոյիշեալ Թորյի քննարկայրը գացած է, զայն բերել տալու համար հետագիւր ուղղուեցաւ նոյն տեղը: Մանուկի յայտարարութեանց վրայ ձեռնարկուեալ

ցան նաև գրավաճառ եղիս որ քովի-  
թէի անդամ է և հրահրութեամբ ըն-  
դունած ու պահած է. Մկրտիչի քե-  
ռուցին Յովսէփ որ պոստպաները  
Մանուկի յանձնած էր, քովիթէի ա-  
նիծապարտ անդամներէն Մկրտիչի  
եղբայրը՝ Յովհաննէս ու Երուանդ  
Յովսէփներն. Ասոնց հարցաքննու-  
թեանց ձեռնարկուեցաւ և սակայն  
այդ միջոցին հաստատուեցաւ թէ Յով-  
սէփի, Արշակ ու Գարեգին եղբունա-  
կան արարքէն ետքը փախած են և  
Մանուկ ալ շատ ատաղ մեռած է:

Մկրտիչի քեռորդին Յովսէփ յայ-  
տարարեց թէ Մանուկի, մօրեղբորը՝  
Մկրտիչի և ամբաստանեալներէն Յով-  
հաննէսի թելադրութեամբ Դրօշակ  
ընկերութեան մէջ լտած է. մանա-  
ւանդ Մանուկ իրենց շատ մը խոզա-  
բարական թելադրութիւնները ըրած է,  
և ինք յաճախելով Մանուկի սենեակը,  
զոր Մանուկ քովիթէի վերաբերողնե-  
րուն գումարման վայրը ըրած էր, և  
Դրօշակ կրօնագիրը կարգացած և  
այդ կերպով տեղակացած է ընկերու-  
թեան խոզաբարական գաղտնի բաղ-  
ձանքներուն և գործերուն. նաեւ  
Թորգոմի ու Սիլվիո Բիչիի հետ մաս-  
նաւոր յարաբերութիւններ հաստա-  
տելով, անոնց վստահութիւնը գրա-  
ւած է, որով եղբունական արարքէն  
քիչ ժամանակ ատաղ Սիլվիո Բիչի  
պարկի մը մէջ գրուած իրեն յանձ-  
նած է 15 հաս փշտիկաւոր սպումպոս  
և կարգ մը հայերէն տառեր. ատոնք  
նախ իր մօրեղբորը հետ բնակած կրա-  
ւիթէ արարթմանին դռնպանի սեն-  
եակին կիցը գտնուած արգուկի սեն-  
եակին տակը պահած են, բայց յետոյ  
մօրեղբորը՝ Մկրտիչի ազգարարու-  
թեան վրայ անկէ առնելով Մանուկի  
տարած է:

Յովհաննէս ալ այս պարագաները  
մտածաւ խոստովանելով ըսաւ թէ ինք  
ալ Դրօշակ ընկերութեան կը վե-  
րաբերի և Մանուկի խոզաբարական  
ընկերութեան յանձնած է. կրօնագիր  
արարթմանին մէջ ատոր բնակած  
սենեակն խոզաբարակելով Մկրտիչի  
կողմէ անոր ուղղուած հայերէն նա-  
մակ մը գտնուեցաւ. նամակը թարգ-  
մանուեցաւ. իմաստը այն էր թէ քե-  
ռորդին Յովսէփ իրը պատահմամբ իր  
տեսած ու կարողացած նամակին պա-  
րունակութիւնը ուրիշ տեղ յայտնէ  
պիտի սպաննուի և քնաջինջ պիտի  
ըլլայ: Այս պարագաները հարցուե-  
ցան Յովհաննէսի, որ ըսաւ թէ Յով-  
սէփ երիտասարդ ըլլալուն համար  
անոր փափաքները բարեփոխելու նը-  
պատակով գրած էր. այդ կերպով  
Յովհաննէս ուղեց տարբեր մեկնու-  
թիւն մը տալ խնդրոյն. Սակայն նա-  
մակին նպատակին համար Յովսէփ  
հարցաքննուելով ըսաւ թէ Մկրտիչի  
յեղափոխական նպատակներուն բեր-  
մամբ Մանուկի միջոցաւ ձեռնարկուեց  
բերուելու ձեռնարկուած պահուն,  
այդ մասին Մկրտիչի զրած նամակը  
կերպով մը Յովսէփի ձեռքը անցած և  
պարունակութեանը տեղակացած է,  
ուստի այդ կէտը ուրիշ տեղ մը չըսե-  
լու նպատակով սպաննալիք եղած է:  
Ասկէ վերջը յիշեալ Յովսէփ ալ հա-  
մոզուելով նոյն թուականէն սկսեալ  
քովիթէին մէջ ընդունուած է և ա-  
նոր շատ մը յեղափոխական կարեւոր  
ժառանգութիւններ ընել տուած են:

Գրավաճառ եղիս խոստովանեցաւ  
թէ Թորգոմի անօրհուրութեան վրայ,  
եղբունական արարքէն երկու օր ա-  
ռաջ Մանուկի կողմէ արուած հրա-  
նիթեր պարունակող տուփերը ըն-  
դունած է. այսպէս քանի մը որ իր

տան մէջ յատկապէս պահելէ յետոյ,  
եղբունական արարքէն քիչ ետքը,  
Մանուկի տղաբարութեան վրայ,  
աղբանոցը նետելով բնաջինջ ըրած է.  
եղիս Մանուկի հետ դէմ առ դէմ  
բերուելէ յետոյ խոստովանեցաւ թէ  
Դրօշակ ընկերութեան անդամ է,  
Թորգոմը կը ճանչնայ և անոր հետ  
խոզաբարական վաղեմի յարաբերու-  
թիւններ ունի:

Ամբաստանեալ Երուանդ Յովսէփ-  
եան խոստովանեցաւ թէ կը ճանչնայ  
Սիլվիո Բիչիին այսինքն Վահանը, և  
Թորգոմի ու Աշոտը. կարգացած է  
Դրօշակ կրօնագիրը, այսպէս հասու-  
ըլլալով խոզաբարական նպատակնե-  
րու, և թէ Մանուկի մօտ գացած է  
խոզաբարական բաներու և ներկայ  
գործողութեանց վրայ տեղեկու-  
թիւններ առնելու համար. նպատակ  
ձեռնով ընկերութեան տրուելու հա-  
մար Երուանդ՝ Մանուկի յանձնած էր  
գումար մը: Այս մասին նախապէս  
ըրած խոստովանութիւնը փոխելով  
Երուանդ ըսաւ թէ զրամը փոխ տուած  
է Մանուկի Սակայն, հաստատուած է  
թէ այս Յովհաննէսն ու Թորգոմին  
ու Վահանին կողմէ իրենց քովիթէին  
մէջ մտցուած է և հրահրութեան պահող  
կարեւոր անձերէն է:

(Շարունակելի)

### ՈՐԸ ՕՐԻՆ

Թուրք պարսկական հարցը,  
հետզհետէ սուր կերպտրանք  
կառնէ:

Վայրկեանէ վայրկեան կուրբի  
է սպասել երկու պետութիւննե-

### ՄԵՆԵԱԼ ԹԷ ԿԵՆՂԱՅԻ ՄԱՐԲ ԹՈՒԷՅՆԷ (')

1892-ի Մարտ ամիսը Մանթոն  
կանցնէի. Ճէնովի ծովափին վրայ,  
Այս մեկուսացած եւ բազմատարար  
մենիկ անկիւնը մարդ կարող է վա-  
յելի այն բոլոր առաւելութիւնները  
որ կընծային քանի մը քիչօքէ թիւ հե-  
ռուն գտնուող Նիսն ու Մոնթ-Բար  
լոն, իրենց համազգային ժողովին  
մէջ:

(') Մարտ Թուէն. անգլիական  
գրականութեան մէջ փայլող է՛ն ա  
կանաւոր երգիծարանն է. Թէպէտեւ  
Ամերիկացի, չըջած է երկրագնդի  
գլխիցէ բոլոր անկիւնները եւ այդ  
իւրաքանչիւր տեղի մասին ունի եր-  
գիծական արտագրութիւն մը. մանա-  
ւանդ իր Անմեղները Արտասահմա-  
նուած աշխատութեան մէջ Պատած եւ  
հետազոտած է Ասիոյ այլ եւ այլ կող-  
մերը ու մերթ ակնարկութիւններ  
ունի հայոց մասին եւս որոնց իգա-  
կան սեռի առոյգ եւ լի կարգը Ամերի-  
կայի երգիծարանը քիչ մը խորհրդա-  
ւոր յիշուցներու են միզած: Թողլով  
ատոնց թարգմանութիւնը ուրիշ պա-  
րագայի մը, իրենց բնագրին այս  
անգամ կը թարգմանենք մէկ ուրիշ  
հետաքրքիր հատուած մը՝ առնուած  
Ֆրանսերէն թարգմանութեանէն: Այս  
տիեզերական ախտին, սիւնա մեռիք,  
եկուր սիրեմտի փայլուն պատկերը,  
զձուած թուէլինի սուր ու հմայիչ  
վիճիկով, կասկած չկայ որ զուրկ չըլ-  
լար հետաքրքրութիւնն է:

Թարգմանողը.

Հոն կայ միեւնոյն արեւը: միւն-  
նոյն պալատիկ օդը, միեւնոյն կա-  
պոյտ ջուրը, բայց հրմտումէ, աղ-  
մուկէ, մէկը միւսին առթող շուա-  
րուցներէ: Մանթոն գիւղաքաղաք  
մըն է խաղաղ, պարզուկ հանդարտ,  
առանց մեծամեծ պահանջներու, Հա-  
րուրտ եւ մեծաշուք մարդիկ չեն գար  
հոն: Ահա հասարակ չեն գար հոն. ըսել  
կուզեմ. որովհետեւ կայրելի է հան-  
գիւլի մանց երբեմն եւ, իրապէս,  
ատոնցմէ մէկուն հետ ծանօթացայ  
եւ Չը մասնելու համար իր անու-  
նը լոկ պիտի կ'ընծի գիւրքը Սիլվի:  
Օր մը ուրեմն երբ միասին կը ճա-  
չէինք Օթէլի սէզնիկէ յանկարծ ը-  
սաւ ինձ:

— Ե՛րևո՛ւ, նայե՛ցէ՛ք սա դուրս ել-  
լող մարդուն Լա՛ւ յիշեցէ՛ք իր գի-  
մագծերը:

— Ինչո՞ւ: Գիտէ՞ք իր ով ըլլալը:  
— Այո՛: Ձեր ժամանուածէն քանի  
մը օր ատաղ հոս էր Լիօնի մետաքսի  
նախկին Ֆարիքս օրը մ'է քայտած  
գործէն եւ մեծապէս հարուստ ինչպէս  
կըսեն: Ու կենթագրեմ թէ աշխարհի  
մէջ միայնակ գլխու է. որովհետեւ  
միշտ սխուր ու երագուն կը թուի  
եւ ոչ ոքի կը խօսի Ձիւրք կանուա-  
նէ Թէսֆիլի Մանեան:

Կր կարէի թէ Սիլվի պիտի բա-  
ցատրէր ինձ, այժմ, որ այնքան հե-  
տաքրքրող կերեւէր այս պ' Մանեա  
նով, սակայն փոխան ատոր, խոր  
մտածմունքի մէջ ինկաւ եւ պահ մը  
զիս մոռնալ թուեցաւ, զիս ու բո-  
վանդակ տիեզերքը:

Մերթ ընդ մերթ ձեռքը արծաթ-  
եայ մազերուն մէջ կը մ'ընկէր, որ  
պէս օգնելու համար իր խոկմանց

եւ թողնելու որ ճաշ ստաի:

Ապա ըսաւ.  
— Ո՛չ, անչո՛ւ շա՛ մոռցեր եմ:

— Բայց ի՞նչ, ի՞նչ է որ չէ՞ք կա-  
րող վերջելի:

— Հէնս էնտրըսընի սիրուն վի-  
պակներէն մէկն է. Այլ եւս չեմ յի-  
շեր: Սպաշտ բան մ'էր. — մանուկ մը  
Թուլուն մը ունէր վանդակի մը մէջ՝  
որ կը սիրէր, բայց որուն վրայ բնաւ  
հոգ չէր տաներ: Թուլունը կերպէր  
առանց իր ունկնդրութեան եւ ա-  
ռանց իր նկատման: Սովն ու ծարաւը  
վախճան դրին զժողովուրդ փոքրիկ  
է կին. իր գեղգեղանքը դարձաւ  
թոյն ու պաղատական, եւ ի վերջոյ,  
մեռաւ: Մանուկը զգաց իր խոճա-  
խայթը սրցունքի հեղիցներ թա-  
փեց եւ իր ընկերները կանչեւ Ընդ  
հոգեցին Թուլունը չքով եւ կսկծալի  
վշտով առանց գիպնալոյ ինձ փոք-  
րիկները թէ կան մարդիկներ որ  
կը թողուն սովածան մեռնիլ բանաս-  
տեղծները՝ սպա անոնց պիտի թող  
ման հանդէպներ կ'տարելու եւ ար-  
ձաններ բարձրացնելու համար, որոնց  
ծախսը կը բաւէր անոնց գոյութիւնը  
պահպանելու եւ գիրենք երջանիկ կա-  
ցուցանելու...

Առ ա՛յժմ...

Բայց հոս ընդմիջուեցանք: Նոյն  
երկրոյն հանդիպեցայ Սիլվիի ժամը  
10-ին առեւտները եւ հրաւիրեց ինձ  
սայտը բարձրանալ իր հետ ծխելու  
եւ կ'ոսկ մը խմելու Սա լաւ վայր  
մըն էր խոսակցութեան համար հան-  
գիտ նստարաններուն մէջ, լամբար-  
ներու շտղողուն լոյսին ներքեւ եւ  
ձիթենի փայտեղէ զօրաւոր ու բո-  
ցավառ կրակին հանդէպ: Ու ինչ որ

րու քաղաքական յարաբերու-  
թեանց խզումին:

Հեռագիրները արդէն ծանու-  
ցին թէ՛ Թէհրանի կառավարու-  
թիւնը վերջնականապէս մերժած  
է Բ. Դրան ռազմարկը:

Սուլթանի կառավարութիւնը  
կազմակերպած է, Վաճիտ բաշա-  
լի նախագահութեամբ, յանձնա-  
խումբ մը, որ ուղարկուելու է  
Թրքա-պարսկական սահմանը,  
խնդիրը քննելու համար: Իր այս  
սրտշուճը Երլարզի գահլիճը ծա-  
նուցած է պարսկական կառավա-  
րութեան և խնդրած որ այս  
վերջինս ալ ընչանակէ իր ներկա-  
յացուցիչները, և որ սակայն  
մօրժուեցաւ:

Խնդիրը չեզոք հսկարածնի  
վրայ գտնուող և թուրքերու կողմէ  
աւազակորէն գրաւուած 7 գեղե-  
րու մասին չէ միայն, այլ 20000  
քառակուսի հազարամէտր տա-  
րածութեան մը մասին է, որ  
մինչեւ այսօր անորոշ մնացած է  
որուն պատկանիլը:

Շահին կառավարութիւնը թը-  
ք կան այս կամայականութեան  
գէմ խօսի կը բողոքէ, և կը  
պնդէ որ 1847ին իրենց միջեւ կա-  
յացած դաշնագրի համաձայն  
անգլիացի և ռուս սպաներէ կազ-  
մուած յանձնախումբ մը ուղար-  
կուի զձէլու համար սահմանը,  
որ 1867ին սկսած է և չէ վեր-  
ջացած:

մեր քէ ֆը կաւելցնէր, դուրսի  
ծովէն եկող կոհակներու աղաւթին  
օրօրու մնէր, Երկրորդ կողմը կոն-  
ծելէ եւ մէկ նիւթէն միւսին անցնե-  
լէ վերջ, Սմիթ ըսաւ:

— Այժմ, ազատ ենք, ես՝ ձեզ  
պատմելու հետաքրքիր պատմութիւն  
մը, դուք լսելու համար զիս Սա եր-  
կար առեւնէ ի վեր գաղտնիք մ'էր իմ  
եւ ուրիշ երեքի միջեւ, բայց այժմ  
պիտի փշրեմ կ'նիքը որ գրոյած է  
զայն կարող էք ունկնդրել զիս:

— Լաւագոյնը ընել կարելի չէ:  
Սկսեցէ՛ք:

Եւ, անհա՛ թէ Սմիթ ինչ պատմեց  
ինձ:

— Երկա՛ր տարի եր ատաղ երթաւ-  
սարգ արգիսդ մէկ խիստ երթա-  
սարգ արգիսդ մը, եւ Ֆրանսայի  
գեղջիկան վայրերը կը վազդուէի  
հոս ու հոն նկարներ ընելով Ընկե-  
րակից ունեցայ երկու երթասարգ  
եւ ազնի ֆրանսայիներ որոնք, ինձ  
նման գիւղավայրեր կը թափառէին  
Երեքս ալ նոյնքան երջանիկ էինք՝  
որքան ազգաս եւ նոյնքան աղքատ՝  
որքան երջանիկ — Իտալիայի պահե-  
ցէք այս բանածերս: Իմ նոր ընկեր-  
ներս կը կոչուէին Քլոտ Ֆոնըր եւ  
Քլոտ Պուլանտէ. սիրելի տղեկներ,  
էն երջանիկ հոգիներ որ երբէք հեզ-  
նած ըլլան իշուստութիւնը, եւ  
զուարթ բոլոր ժամանակը:

Վերջապէս Եկանք հաստատուել  
Պրէզանի մէջ գիւղակ մը, ուր ուրիշ  
արգիսդ մը, մեզ չափ աղքատ, բն-  
դունեց մեզ եւ արգիսդ բառին խ-  
կական առու մով՝ անթի մեռնելէ:  
Ան կը կոչուէր Ֆրանսուա Միլոն:

— Ի՞նչ, Մեծ Ֆրանսուա Միլոնն է:  
Թարգմ. Յովակ  
(Շարունակելի)

Պատիկ կառավարութիւնը մը- տիկ իսկ չուզեր ընել Թուրքիոյ կամքը եկեղեցւոյ տարարէ թէ՛ մինչեւ որ Թուրքիան իր զօրքերը ետ չը քաշէ . անիրաւարար իւրացուցած երկրէն . ու է բանակ ցութեան մէջ շի մտնելու :

Ամսոյս 17ին պարսից զեւ պանը եպարքոսին հետ ունեցած երկամասեայ տեսակցութեան մը միջոցին , գիտել տուած է թէ՛ ինչպիսի վտանգի մը կենթարկուի Թուրքիան՝ իրեն չը պատկանած երկիր մը գրաւելով , ու անգամ մըն ալ կ'չ բրած է Թուրքիոյ խաղաղասիրութեան , համաձայնութեան մը յանգելու համար : Նաեւ Բ. Դրան պաշտօնապէս իմացուցած է թէ իր կառավարութիւնը արգէն կոչումը րում է անգլիական և ռուսական կառավարութիւններուն որ միջոտեն ու վերջ տան ներկայ անհամաձայնութեան :

Եւ հին կառավարութիւնը տեսնելով , որ Սուլթանը զինուորական պատրաստութիւններ կը տեսնէ , ինքն ալ սկսած է համաձայնը տնօրինել :

Արգէն 40000 պիւնուր խրմբուած է սահմանին վրայ , ինչ որ անհաւատալի կերեւայ , որովհետեւ Պարսկաստանի մէջ , ինչպէս յայտնի է , զինուորութիւնը ստիպողական չէ , այլ պատերազմի առան , զէնք շարժելու կարող ամէն պարսիկ պարտաւոր է կռուոյ զաշտը զիմել հայրենիքը պաշտպանելու համար :

Ամէն պարագայի մէջ , հաւանական չէ որ պարսկական կառավարութիւնը Թուրքիոյ դէմ պատերազմ հրատարակէ : Գուցէ սուլթանը իր երեւակայութեան մէջ այս տեսակ երազներ կը փայտայէ , որպէսզի առիթ ունենայ իր խալիֆայական հզօր(1) բանակները անգամ մըն ալ յա-

ռաջ վարելու յաղթականօրէն , ոչ թէ կեւ վառ ընելու դէմ , ինչպէս առհասարակ , այլ այս անգամ Սուլթանի հերետիկոս ազանգաւորներու դէմ , որոնք ուղղափառ մահաբաշտութեան արատներն են : Իսլամ աշխարհին երկու հակառակորդ ազանգներու պետերը կը փորձեն իրարու զարնուիլ : Սուլթանը հրճուանքէն ձեռքերը կը շփէ : Չէ՞ որ կատուն մուկերու համար թագաւոր է :

Իսոյց հոս ալ անգլիական խրտուիլակը Սուլթանին դէմ կը կենայ , Հապա Անգլիա՞ն . ինչպէ՞ս խօսք հասկցնել անոր : Աւար Տիր Գալանին թեւերը կը կոտորին . արիւնարու ախորժակները փօրը կը մնան և կը ստիպուի լեզուն սրբել ու տեյր նստիլ :

Ապահովարար անգլիական գահ լիճր իր տալիք պատասխանին մէջ պարծկական կառավարութեան գեր պիտի ելլայ : Արգէն Անգլիոյ ձգտումն է , Ռուսիոյ ներկայ տագնապներէն օգտուելով , որոնք զայն անկարողութեան կը մատնեն արտաքին քաղաքականութեամբ զբաղելու , կազմակերպել , զօրացնել Պարսկաստանը , և իր հիմէն խորտակել այսպէսով օր մը Պարսից ծոցը հասնելու ռուսական երազը : Անգլիան քչիկ քչիկ իր մանածը կը մանէ : Մենք ալ բերաննիս օգին բացած կը սպասենք մեր խենթութիւնները քաւելու :

2.

ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՂԱՆԳ

Սմբրիկայէն խմբագրութեանս հասած են կարգ մը նամակներ զորս հետզհետէ կը սկսինք հրատարակել :

ՄԵՐ ՀՐԱՊԱՐԱԿ

ԳԱՆՈՒՆ ՇԱՐՄԱՆՈՒԹԸ

Յօդուած Ա.

Դաշնակցական մեր ընկերներէն

կը թղթային եւ որուն փայտացումը անբացատրելի սարսփով մը կը սանցնէր սիրտը : Նոյն ինքն Հայր Բանֆիլդն էր... Փրօմքներու մէջ սեղաններէն , ժիւր նշմարած էր ճերմակ պատմուճանի կտորուանքներ սեւ արիւնով արտառուած :

— Աստուած արտաշնորհեց զիս հոս , մտածեց . ուրիշ մը անշուշտ գուրս պիտի հանէր զիւրը այստեղէն... Արդարութեան կամ եկեղեցւոյ մարգիլը , զիականերու յափշտակիչներ , պիտի գային սուղէն զինքը...

Եւ բարձրաձայն խօսելով՝ ըսաւ . — Հանգստագիր խեղճ ծերունի կմախք , ոչ ոք պիտի խէքեք այս սեղաններուն անգործութիւնէն զորս սյնքան սիրեցիր... Դուն պիտի քնանաս քու երազիդ մէջ . քաղցր երազող , զուն պիտի քնանաս այս մատուռին մէջ զոր կուզէիր այնքան անհնարօրէն շքեղ կերպով նորոգելու զոր գոնէ պիտի կրնաս ընել քու գերեզմանդ... Եւ մէկը բան չպիտի գիտնայ քու վրայօքդ , երբէ՛ք , երբէ՛ք , ո՛վ վսեմ գիտի :

գուցէ մտածողներ ըլլան թէ մենք հրապարակ գայով՝ պարզապէս կուզենք Դաշնակցութիւնը հարուածել , կամ նպատակ ունինք հայ ազատագրութեան գործին վնասել , վնասեցնելով մեր այն ընկերները , որոնք այնչափ անկեղծութեամբ փարած են մեր յեղափոխական գործին : Այդ ի՞նչ կարծիքները փարատելու համար ներկայիս կուզանք հրապարակաւ յայտնել այն պատճառներն որոնք մեզ ստիպեցին հրապարակաւ բողոք բարձրացնել Դաշն . շարքերու մէջ տեղի ունեցած անպատեհութեանց դէմ , անպատեհութիւններ որոնք չէին կրնար տեղի ունենալ եթէ ամէն գիտակից ընկեր ժամանակին տեղեկութիւն ունեցած ըլլար կուսակցութեան գլխաւոր անցուղարձերէն եւ մեր ղեկավարները իրենց յայտարարած պարտականութիւններն եւ սուած խոստումներն ճշտաւ կատարած ըլլային :

Մենք նորէն կը կրկնենք թէ դաշնակցականներ ենք եւ անկեղծօրէն ցանկացողներ մեր կուսակցութեան յառաջողութեանը , ու միանգամայն հաւատարիմ , մեր կուսակցութեան մէջ տիրող կարգ ու կանոնին եւ մեր այս ըսածը հաստատելու համար մատնանիշ կընենք մեր բոլոր ընկերներուն զիտցած այն տեղեկութիւնը թէ մենք այժմ հրապարակաւ ըրած մեր գիտողութիւնները ունէինք ճիշտ այն ժամանակին երբ դաշնակցական շարքերուն մէջ սիրեւիք ընկերներ էինք . վրայ հասաւ մեր այն յուսախաբութիւնը , երբ Սասունի մէջ սկսած մեծ գործը բոլորովին մեր յոյսերը ի գերեւ հանեց հակառակ մեր կազմակերպութեանը շոյալած խոստումներուն :

Եթէ մենք ճիշտ այն ժամանակին երեւան չեկանք երբ Սասունի աղէտը պատահեց , այդ միայն անոր համար , որ սպասեցինք թէ , Ամերիկայի կեդ. Կոմիտէն եւ կամ թէ Ամեր . տեղի ունենալիք պատգամ . ժողովը կուզար մեզ բաւականութեամբ տալու մեր զրած հարցերուն եւ մեր ըրած բողոքներուն , որոնց մասին տեղեկութիւն ունէին մեր բոլոր ընկերները : Եւ երբ մենք ըրապէս առ ըրապէս սէինք որ Արեւտ . Բիւրօն մանրամասն տեղեկութիւններ տար թէ ի՞նչու համար Սասունը չի կրցաւ թել

մը աւելի երկար զիմացել , քանի որ իրենք մեզ նախապէս ըսած ու յայտնած էին թէ Սասունը շատ աւելի երկար պիտի կրնար դիմանալ քան թէ դիմացաւ , Արեւտ . Բիւրօն փոխանակ մեր անկեղծ տեղեկագիրը ուղարկելու Սասունի մասին , ընդհակառակը մեզ զրկեց տեղեկագիր մը կովկասի եկեղեցւոյ պատկան կառուածներու գրաւմանը առթիւ , բան մը որ արգէն կարգացած էինք տեղական հայ եւ օտար թերթերու մէջ , Արեւտ . Բիւրօն այս կերպով մեզ զրաւ կատարեալ լքումի մէջ :

Դաշն . ընդհանուր ժողովին գնացող Ամեր . թէ գործիչ պատգամաւորը եւ թէ ընկեր պատգ .ը նոյնպէս չի կրցան մեզ գոհացում տալ Սասունի մասին մեր զրաւ հարցերուն առթիւ : Մեր յուսախաբութիւնը սուելի մեծ եղաւ :

Տեղի ունեցաւ Ամերիկայի Դաշն . պատգամաւորական ժողովը : Մեր բոլոր գիտակից եւ կարող ընկերները հող ներկայացան զօրեղ բողոքներով , եւ բացէ ի բաց պահանջեցին , թէ գործիչ պատգամաւորէն եւ թէ ընկեր պատգամաւորէն ու առանց այլեւ այլի գոհացուցիչ քայտարութիւն տան Սասունի անցքերուն առթիւ : Պատասխանը եղաւ կցկտոր բառերու թոթովութեամբ , որոնք կը բացան բաւականութեամբ տալ եւ ոչ մէկին : Ժողովի մէջ բողոքը եւ աղմուկը սաստկացաւ : Գործիչ—պատգամաւորը պատասխանատուութենէ խոյս տալու համար , քանի որ ինքը եղած էր մեզ տրուած խոստումներու գլխաւոր աղբիւրներէն մին , իր գըրաւոր հրաժարականը մէջտեղ նետեց որպէս զի ընկերները իրենց պահանջները ետ առնեն . առիկա ի հարկէ զուտ ձեւակերպութիւն մըն էր , ճար պիկ «պըլըֆօնի կողմանէ : Եւ յետագայ իրողութիւնները ցոյց տուին որ անիկա հրաժարական տուողներէն չէր , այլ ատիկայ ըրած էր ընկերները զրգեւելու եւ խաբելու համար : Հոս ալ մեր յուսախաբութիւնը շատ մեծ եղաւ :


Մօտաւորապէս 18 ամիս կընէր որ Դաշնակցութեան ընդհանուր պատգամաւորական ժողովը կայացեր էր , սակայն մինչեւ մեր բողոքի օրը մենք եւ ոչ մի արձանագրութիւն

նաւոր որոգեր կուտեցնէին ճիւղալային կեանքով մը :

Ճգմուած , դէմքէն , գանկին , մէկ մասին եւ այտուակրին մէկ այտուցին մէջտեղ անաղարտ կը մնար միմիայն աչքին կը խոտոյն որուն հեղուկացած թիբը կը վազէր թարախոտ արցունքներով :

Այն ատեն ժիւր կանգ առաւ , վարանոտ , ճակատը քրտնաթոր , Հարիւր մէթր՝ հեռու էր փոսէն , եկեղեցիին մօտ , այն փոսէն զոր ընտրած էր Հայր Բանֆիլդը թաղելու համար : Թեւեռուն վրայ չէր կրնար տանիլ այս թոյլ եւ քայքայուած միացողները . այնքան քաջութիւն չունէր որ իր կուրծքին վրայ սեղմելով տանկը մարդու մը այդ գարշելի բեկորները . Ձեռնասայլ մը կողով մը բան մը փնտեց , որով կարենար զիակը դէպի փոս առաջնորդել :

(Շարունակելի)



Գ Ր Ե Ց  
ՕԳՏԱՎ ՍԻՌՊՕ  
ՀԱՅՐ ԲԱՆՖԻԼ

(Թարգմանուած ֆրանսերենէ)

Յետոյ լուց . սաստիկ վհատած : Մնաց որ , ոչ մէկ ձայն չպատասխանեց անձկութեան այս ճիւղին , եւ լուռութիւնը տիրեց : Սարսփով առաջին անակնկալը անցնելէն ետք , Արքան խորհեցաւ որ օգնութեան կանչելը շատ անօգուտ էր : Առնուազն տանը հինգ օր կար որ պատահած էր իր այդ դժբաղդու իւնը , այն օրէն իվեր որ չէին տեսած ծեր վանականը որ մեկնած կը կայծէին , և որ մեռած էր , այդ սիրական աներակներէն սպաննուած :

Դողդալով մօտեցաւ քարերու կուտակումին , աչքերը սեւեռած սանդուխտի վրայ , որուն վերեւ ճանճերը

ստացեր ինք, ու համոզուեցանք որ դեռ երկար ժամանակ չպիտի ստանանք: Այս բոլոր յուսախարութիւններէն յետոյ երբ նամակներով, բողոքներով մեր ձայնը ոչ մի տեղ չըսեցնել տալ չի կրցանք, ինչ որ մեր իրաւունքն էր. որովհետեւ մեր եւ մեզ նմաններու արիւն քրտինքով աշխատած զրաւներովն էր որ Դաշնակցութեան շէնքը հիմնուած էր. ու Ամերիկայի գործիչ—պատգամաւորը փառաւոր կեանք վարած, հետեւապէս մենք Դաշնակցականներ մնալով հանդերձ, այլեւս ուրիշ ճար չի գտնելով և միայն մեր կուսակցութեան եւ յեղգործի շահը աչքի առաջ ունենալով ստիպուեցանք հրապարակ գալ եւ բողոքի ճիշ բարձրացնել:

Ինչ Դաշնակցականներ

(Շարունակելի)

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍԻԱ

Բեթերսպուրկէն կիմացնեն թէ ծովակալ Պիրիլովի հրամարելու մասին շրջած լուրերը բոլորովին անհիմն են: Կոմս Վիթէի գրութիւնը կարծուածէն շատ աւելի հաստատ է: Թրամվայներու գործադուլը վերջացաւ: Լիպսուսի մէջ անգործութիւնը վերահաս տատուած է:

Վարչաւստի գործադուլը անյաջող կը նկատուի. քաղաքը ստացած է իր սովորական կեանքը: Եւրաթ մըն է որ բոլոր յարաբերութիւնները դադրած են կողմակաւ հետ:

Գործաւորական խորհուրդի ներկայացուցիչները որոշեցին որ յունվար 3ին, անցեալ տաւոյն կարմիր շաքարեղան տարեգարձի առթիւ, բոլոր մանիֆաքթուրայի վաճառատուները և թատրոնները փակուին: Երկու օրուան համար քաղաքական գործադուլ պիտի յայտարարուի և քաղաքին քանի մը կէտերուն վրայ Յոյցեր սարքուելու են:

Յեղափոխական շարժումները որ կը յիշեցնեն 1871ի բարիկադան համայնքը, դադրած է: Մոսկովայի շարժումը զսպուած է: Կառավարութեան ձեռք առած միջոցները, շարժումին առաջքն առած է Բեթերսպուրկի մէջ: Քա միայն մասնակի կերպով կարտայայտուի կեդրոնական Ռուսիոյ քանի մը նահանգներուն մէջ: Պէտք է ժամանակ, հաստատ կամք և դատողութիւն, այս մասնակի օտար ցեղերէ կազմակերպուած ազգը խղաղեցնելու համար:

Այնպէս կենթադրուի թէ կառավարութիւնը պիտի կրնայ ասի գլուխ հանել, օրինակէս և կանոնաւորապէս «Տուժարի» ընտրութիւնները կատարելը, իրեն պարտք համարելով:

Բեթերսպուրկէն կը գրեն թէ Պալիկեան նահանգի նորա-

կարգ կառավարիչը Սյուկոպ—Երևելք ժամանած է: Կոմս միջապէս յայտարարութիւններ ցրուած է, որով կը սպառնայ թէ՛ ամենախիստ միջոցներ ձեռք պիտի առնուին եթէ չը յանձնեն ճարտարութեսական կորույզ գնդին մէջ, այն ինչ որ առած են իրենց հրամանատարութեան տակ: Էգաթէրիւսուլի մէջ հաշարաւոր գործաթող գործաւորներ, զօրանոցներու մօտ հրացանաձգութիւնները բրած են, կատարեալ ընդհարում մը տեղի ունեցած է գործաւորներու և զինուորներու միջև, որ 9 ժամ շարունակած են:

Գործաւորներէն 300 հոգի մեռած և շատ մը վիրաւորներ կան: զինուորներու կողմէն 3 մեռած 12 վիրաւոր և 8 ձի սպաննուած, գործաւորներուն մնացած մասը գրեթէ ամբողջութեամբ գերավարած են: Այս վերջիններս աղաւթարձակուեցան հաւատարմութեան երպում տալէ յետոյ, անոնց զէնքերը կառավարութիւնը գրաւած է: Գրականները տակաւին կը մնան փողոցներու մէջ, տեսարանը քստմնելի է: վիրաւորներուն օգնելու համար մտրիկ քաղաքէն բժշկական մասնաբաժին մը կանչուած է:

Բեթերսպուրկ 21 դեկտ.— «Նովոսդի» լրագիրը կը ծանուցանէ. Բեթերսպուրկի մէջ զինուած յեղափոխութիւնը զսպելու համար, կառավարութիւնը ձեռք առած է հետեւեալ միջոցները:

Մայրաքաղաքը բաժանուած է շրջանակներու: Մէն մի շրջանակ յանձնուած է զինուորական չը բաժանատարի մը, որ իր տրամադրութեան տակ ունի հետեւեալ կազմը: Թնդանթաձիգներ խորանկեցնելով և ձիաւորներ: Դաղաքին մէջ գտնուած գործաւորական թաղերու բոլոր մուտքերը խորտակեցնելով զինուորուած թնդանթաձիգներէ պիտի պաշտպանուի, քանի մը խորտակեցնելու արդէն պահուած են մասնաւորներու տուններուն բակին մէջ: Հրամանատարները հրահանգ ունին ամենէն առաջ ապստամբ խումբերու իրարու հետ միաւորումը արգիլել:

Առաջին հրացան արձակուելուն քաղաքը զինուորական գրութեան պիտի ենթարկուի, շատ մը մասնաւորներու բնակարաններու մէջ խուզարկութիւններ պիտի ըլլան, որպէսզի հոն պահուած զէնք եթէ կայ գրաւուին, իսկ թաքստի եղող շարժման պարզութիւնները ձերբակալուին:

«Մոլոդա» լրագիրը կը հաստատէ թէ՛ նախարարներու խորհուրդը իր վերջին նիստին մէջ խնդրոյ առարկայը բրած է, թէ քանի երեսփոխան պէտք է ներկայ ըլլայ Տուժարի առաջին

նիստը բանալու համար, եթէ անկարգութիւնները և երկաթուղիի գործադուլները արգելք չըլլան բոլոր երեսփոխաններուն Բեթերսպուրկ հաւաքուելուն: Այս լրագրի համեմատ, նախարարներու խորհուրդը որոշած է որ 150 երեսփոխան բաւական համարուի:

«Սոլովո» կըսէ թէ Տուժարի համար 1906 ի պիտի ճէին մէջ նախառեսուած ծախքերը 1500000 ռուպլի կը յանգի:

Բեթերսպուրկ 20 դեկտ.— Մոսկովայի մէջ, յեղափոխականներու կողմանէ, սակարանի մօտ Մոսքովա անուն զետի վրայ գտնուող մեծ կամուրջը օգը նետուած է: Զինուորական չոգեկառք մը ջուրին մէջ ձգուած է: Այս իսկ պատճառով Ռուսիոյ և Սիպիրի միջև յարաբերութիւնները ընդհատուած են:

Բեթերսպուրկ 20 դեկտ.— Յեղափոխականներու ծրագիրն է եզեր Նիքոլաէվսքա երկաթուղիին կամուրջը բիրոգսիլինով օգը նետել: Աստիկանութիւնը իմացաւ այս ծրագիրը, և վերոյիշեալ կամուրջի մօտ զբողոք տուն մը խուզարկելով 10 քիլոկրամ բիրոգսիլին գտաւ և գրուեց:

Լոնտոն 20 դեկտ.— «Սոլովո» լրագիրը Մոսքովայէն կիմանայ, վերջին խառնակութեանց ժամանակ 20000 հոգի մեռած է, ասոնց մէջ կան շատ կիներ և տղաքներ:

Օտէսա 20 դեկտ. Մեծ սրճարանի մը մէջ 4 ումիւր նետուեցաւ և մեծ վնաս պատճառեց: Երկու ուրիշ ումիւրեր ոտիկանապետութեան առջեւ պայթեցան, մեռած է ոտիկանական սպայ մը և 3 հոգի վիրաւորուած:

Պէրլին 21 դեկտ.— Վարչաւստի կիմացնեն, ճարտարութեսական թաղի մը մէջ գրանուած է դժոխային մեքենաներու աշխատանոց մը, այս պատճառով տեղի կունենան անհամար ձերբակալութիւններ: 180 ումիւր շատ մը դժոխային մեքենաներ և 30000 յեղափոխական կոչիւր բռնուած են:

Բեթերսպուրկ 21 դեկտ.— Լիդովայի մէջ կացութիւնը յուսահատական է, 40000 ապստամբներ դէպի Քէլիցա քաղաքը կը դիմեն, հաւանական է որ արդէն անոր տիրած ըլլան:

Պէրլին 21 դեկտ.— Բեթերսպուրկէն կը հետադարձեն կողմակալ կառավարիչ իշխան Վորոնցովը, իր բաղձնեքով պաշտօնանկեղած է:

Պէրլին 21— Բեթերսպուրկէն կը հաղորդեն թէ՛ հոն սարսափելի սոզ կը տիրապետէ. ամբողջ ընտանիքներ փողոցներու մէջ կը մօրան:

Բեթերսպուրկ 21 դեկտ.— Քէլիցի մէջ նորէն ընդհանուր ապստամբութիւն ծագած է: Ապստամբները զօրավար Պորնովի հրամանատարութեան տակ զբողոք զօրագունեղը շարժուիչուրը բրած են:

Բարիկ 22 դեկտ.— «Նիւեօրք Հէրալտ» լրագրի Մոսքովայէն առած լուրի մը համաձայն, ապստամբներէն 500 հոգի անձնատուր եղած են, ծագած են շատ մը հրգեհներ, յեղափոխականները կը սպառնան ամբողջ քաղաքը հրկիզել:

Բեթերսպուրկ 23 դեկտ.— Կառավարութիւնը, յեղափոխականներու դէմ խիստ միջոցներ ձեռք առած է: Անցեալ շաբաթ հոս 33 տպարան փակուեցան, իսկ ապի օր, ընկերավարական 8 խմբագրապետներ ձերբակալուեցան: Յեղափոխական Գոմիդէի շատ մը վտանգաւոր նամակները բռնուեցան:

### ՄՐԱՀ ՊՈՒԿԱՐԻԱ

Սոսն Պուկարիանի վարիչները կը յայտարարեն Վառնայի հասարակութեան թէ Վեսելօս թատերական խումբը քանի մը օրէն պիտի հասնի Վառնա եւ Եննդեան օրերուն միայն քանի մը ներկայացումներ պիտի տայ: Կը հրաւիրուի Վառնայի հասարակութիւնը առիթէն օգտուիլ Վեսելօս խմբին այս կարճ այցելութեան:

### ՆՈՐ ԱՇՍԿԵՐՏՆԵՐ

Կընդունուին նոր տարոյս սկիզբէն. դասերն են Յրանսերէն, Հայերէն, Պուկարիէն ու Անգլիերէն: Ամսականը 8—6 ֆրանք:

Ա. Ամիրխանեանց

1887 ի. ՏՄԻԻ 1906  
ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ  
Աւսումնական թիւ

Կը մտնէ իւր գոյութեան քսաներորդ տարեշրջանը, և կը շարունակուի իւր ծանօթ ուղղութեամբ և ծրագրով: «Հանդէս Ամսօրեայ» իբրեւ Հայագիտութեան հանդէս՝ պիտի բովանդակէ հայ գրականութեան, մատենագրութեան, բանասիրութեան, լեզուաբանութեան, հնախոսութեան, աշխարհագրութեան պատմութեան վերաբերեալ քննադատական ուսումնասիրութիւններ—ինքնագիր և թարգմանածոյ: Զանց պիտի շառնուին հայ ականաւոր ու գրագէտ անձնաւորութեանց կենսագրութիւնները: Եւ այնպէս քննադատական տեղեկութիւն պիտի տրուի ազգային կարեւոր լրերու, նոր հրատարակութեանց եւն.— Տարեկան բաժնեգրին է 10 ֆր. 4 բրկանիսիկ: Խմբագրութեան հասցէն «Ար Բէտաքսիօս տը յա Բրվիւ Հանդէս» Վիեննա (Օգրի) է: Յ Մխիթարեանց 4